

Հավելված

ՀՀ Նախագահի
2014թ. օգոստոսի 02-ի
ՆՀ- 199 -Ն հրամանագրի

ԿԱՐԳ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ
ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԵՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների (այսուհետ՝ թեկնածուներ) ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործառույթները, ինչպես նաև հանձնաժողովի գործունեության կազմակերպման, թեկնածուների ընտրության մրցութի անցկացման և թեկնածուների առաջադրման ընթացակարգերը:

2. Թեկնածուների ընտրության մրցութի արդյունքներով հանձնաժողովը կազմում է երեք անձից բաղկացած ցուցակ՝ Հայաստանի Հանրապետության Նախագահին ներկայացնելու նպատակով:

3. Հանձնաժողովի գործունեությանը իրավակազմակերպական օժանդակություն է ցուցաբերում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմը (այսուհետ՝ աշխատակազմ):

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Հանձնաժողովի գործունեությունը հիմնված է թեկնածուների ընտրության պայմանների հավասարության, ընթացակարգի թափանցիկության և հրապարակայնության սկզբունքների վրա:

5. Հանձնաժողովը՝

1) կազմակերպում և անցկացնում է թեկնածուների ընտրության մրցույթ (մրցույթ կամ նոր մրցույթ)։

2) սահմանում է՝

ա. թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը,

բ. առավելագույն միավորի բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների,

գ. գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները,

դ. չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ համապատասխան պահանջի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում,

ե. գնահատման և միավորների հաշվարկման կարգը.

3) համադրում է թեկնածուների համապատասխանությունը 1950 թվականի նոյեմբերի 4-ի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 21-րդ հոդվածի 1-ին մասի և 23-րդ հոդվածի 2-րդ մասի, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2012 թվականի մարտի 28-ի «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնի համար թեկնածուների ընտրության մասին» թիվ CM(2012)40 ուղեցույցի, ինչպես նաև այլ վերաբերելի փաստաթղթերի պահանջներին և գնահատում նրանց.

4) լուծում է գնահատման գործընթացի հետ կապված այլ հարցեր.

5) կազմում և Հայաստանի Հանրապետության Նախագահին է ներկայացնում մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը.

6) մրցույթի կազմակերպմանն ու անցկացմանը վերաբերող հարցերի կապակցությամբ կայացնում է որոշումներ, այդ թվում՝ ներկայացված փաստաթղթերի կամ տեղեկությունների հավաստիությունը պարզելու, ինչպես նաև հավելյալ տեղեկություններ ստանալու վերաբերյալ.

7) իրականացնում է սույն կարգով նախատեսված այլ գործառույթներ:

6. Հանձնաժողովի նիստն իրավագոր է հանձնաժողովի առնվազն հինգ անդամի մասնակցության դեպքում: Հանձնաժողովի նիստը վարում է հանձնաժողովի՝ նիստին մասնակցող տարիքով ավագ անդամը:

7. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

8. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Մրցույթի հարցազրույցի փուլին կարող են ներկա գտնվել զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ հանձնաժողովի կողմից սահմանված կարգին համապատասխան: Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովն իր աշխատանքներում ներգրավում է համապատասխան ոլորտների, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուների (անգլերեն և ֆրանսերեն) մասնագետների՝ վերջիններիս համաձայնությամբ:

3. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

9. Հանձնաժողովը մրցույթը հայտարարում է Եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության դատավորի պաշտոնավարման ժամկետի ավարտից առնվազն 12 ամիս առաջ:

10. Եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության դատավորին այլ պաշտոնում ընտրելու կամ նշանակելու, նրա կողմից պաշտոնաթողության խնդրանք ներկայացնելու, ինչպես նաև լիազորություններն իրականացնելու անհնարինության այլ դեպքերում հանձնաժողովը մրցույթը հայտարարում է համապատասխան փաստերի մասին պատշաճ տեղեկանալու օրվան հաջորդող մեկամսյա ժամկետում:

11. Հանձնաժողովը աշխատակազմի միջոցով մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը (այսուհետ՝ հայտարարություն) հրապարակում է առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների, Հայաստանի Հանրապետության դատական իշխանության և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքերում (այսուհետ՝ պաշտոնական կայքեր):

12. Հայտարարությունը պետք է պարունակի առնվազն հետևյալ տվյալները՝

1) թեկնածուներին ներկայացվող պահանջները.

2) մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը (այսուհետ՝ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ).

3) մրցույթի անցկացման պայմանները, այդ թվում՝ թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը, առավելագույն միավորի բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների, գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները, չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ համապատասխան պահանջի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում, գնահատման և միավորների հաշվարկման կարգը.

4) փաստաթղթերի ներկայացման ժամկետը և վայրը:

13. Մրցույթին մասնակցելու հավակնություն ունեցող անձը (այսուհետ՝ հավակնորդ) հայտարարության հրապարակմանը հաջորդող 20 օրվա ընթացքում աշխատակազմ է ներկայացնում մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթեր), ինչպես նաև իր հետ հաղորդակցվելու համար անհրաժեշտ բնակության և էլեկտրոնային փոստի հասցեները:

14. Փաստաթղթերը կարող են հանձնվել առձեռն կամ ուղարկվել փոստով:

15. Փաստաթղթերն ընդունելու նպատակով աշխատակազմում վարվում է համապատասխան գրանցամատյան:

16. Փոստով ուղարկված փաստաթղթերը համարվում են ժամկետում ներկայացված, եթե աշխատակազմը դրանք ստացել է մինչև սույն կարգի 13-րդ կետում նշված ժամկետի լրանալը:

17. Փոստով ուղարկված փաստաթղթերի ստացման վերաբերյալ հավակնորդը ծանուցվում է փաստաթղթերը ստանալուն հաջորդող մեկ օրվա ընթացքում՝ իր կողմից ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեով:

18. Փաստաթղթերն ընդունելիս աշխատակազմը պարզում է դրանց լրիվությունը և համապատասխանությունն անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին:

19. Առձեռն ներկայացված փաստաթղթերը թերի լինելու կամ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին չհամապատասխանելու դեպքերում հավակնորդն այդ մասին գրավոր տեղեկացվում է փաստաթղթերը հանձնելու պահին: Փոստով ուղարկված

փաստաթղթերը թերի լինելու կամ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին չհամապատասխանելու դեպքերում հավակնորդն այդ մասին ծանուցվում է մեկ օրվա ընթացքում՝ իր կողմից ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեով:

20. Փաստաթղթերի թերությունները հավակնորդի կողմից կարող են վերացվել փաստաթղթերի ներկայացման համար սույն կարգի 13-րդ կետում նշված ժամկետը լրանալուն հաջորդող երեք օրվա ընթացքում:

21. Աշխատակազմը, ուսումնասիրելով հավակնորդների ներկայացրած փաստաթղթերը, սույն կարգի 13-րդ կամ 20-րդ կետերում նշված ժամկետները լրանալու օրվան հաջորդող երկու օրվա ընթացքում կազմում և հանձնաժողովին է ներկայացնում հավակնորդների ցուցակը և նրանց ներկայացրած փաստաթղթերը: Աշխատակազմը հանձնաժողովին տրամադրում է նաև թերի և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած հավակնորդների ցուցակը և նրանց ներկայացրած փաստաթղթերը՝ նշելով թերությունները և դրանք վերացնելու կապակցությամբ սույն կարգի 19-րդ և 20-րդ կետերի համաձայն ձեռնարկված միջոցառումները և դրանց արդյունքները:

22. Մրցույթն անցկացվում է երկու փուլով, որոնցից առաջինը փաստաթղթերի լրիվության և համապատասխանության ստուգման (այսուհետ՝ փաստաթղթային ստուգման) փուլն է, իսկ երկրորդը՝ հարցազրույցի:

23. Մրցույթի փաստաթղթային ստուգման փուլում հանձնաժողովը ստուգում է փաստաթղթերի լրիվությունը, դրանց համապատասխանությունն անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին, իսկ ողջամիտ կասկածի դեպքում՝ նաև փաստաթղթերի կամ տեղեկությունների հավաստիությունը: Հավակնորդի ներկայացրած փաստաթղթերի կամ տեղեկությունների հավաստիությունը հանձնաժողովի որոշմամբ պարզվում է աշխատակազմի միջոցով: Հանձնաժողովի որոշման հիման վրա աշխատակազմի միջոցով են ստացվում նաև թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատմանը վերաբերող հավելյալ տեղեկությունները: Հանձնաժողովի տեղեկացմամբ հավակնորդը կարող է մասնակցել փաստաթղթային ստուգման փուլին:

24. Հաշվի առնելով սույն կարգի 23-րդ կետի համաձայն ձեռնարկված միջոցառումների արդյունքները՝ հանձնաժողովը կազմում է մրցույթի հարցազրույցի փուլ

անցած անձանց (այսուհետ՝ հարցազրույցի մասնակիցներ) ցուցակը, որի մասին հավակնորդները և հարցազրույցի մասնակիցները ծանուցվում են ցուցակը կազմելուն հաջորդող մեկ օրվա ընթացքում՝ իրենց կողմից ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեներով:

25. Հանձնաժողովը հարցազրույցի մասնակիցների ցուցակը, ինչպես նաև հարցազրույցի անցկացման օրը, ժամը և վայրը հրապարակում է պաշտոնական կայքերում:

26. Հարցազրույցի փուլում հանձնաժողովի նիստին ներկա յուրաքանչյուր անդամ հանձնաժողովի հաստատած չափանիշներին և կարգերին համապատասխան գնահատում է հարցազրույցի մասնակիցներից յուրաքանչյուրին:

27. Հարցազրույցի փուլի գնահատման արդյունքներով ամենաբարձր հանրագումարային միավորներ ստացած երեք հարցազրույցի մասնակիցներն ընդգրկվում են մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակում (այսուհետ՝ ցուցակ), եթե ապահովված է սեռերի ներկայացվածության սկզբունքը: Եթե ամենաբարձր հանրագումարային միավորներ ստացած երեք հարցազրույցի մասնակիցներն էլ նույն սեռի են, ապա հանձնաժողովն իր որոշմամբ նրանցից առավել ցածր հանրագումարային միավոր ստացածին փոխարինում է հարցազրույցի փուլի գնահատման արդյունքում ամենաբարձր հանրագումարային միավոր ստացած հակառակ սեռի մեկ հարցազրույցի մասնակցով:

28. Սեռերի ներկայացվածության սկզբունքից բացառություն թույլատրվում է, եթե հանձնաժողովը ծանրակշիռ փաստարկներով կամ բացառիկ հանգամանքների մատնանշմամբ հիմնավորում է դրա պահպանման անհնարինությունը:

29. Հարցազրույցի փուլի գնահատման արդյունքներով հավասար միավորներ ստացած հարցազրույցի մասնակիցներից որևէ մեկին կամ մի քանիսին ցուցակում ընդգրկելու նպատակով անցկացվում է քվեարկություն, բացառությամբ այն դեպքերի, երբ քվեարկության հնարավոր արդյունքները կարող են խախտել սեռերի ներկայացվածության սկզբունքը: Այս դեպքում, հանձնաժողովի նիստին ներկա յուրաքանչյուր անդամ բաց քվեարկությամբ «կողմ» է քվեարկում հարցազրույցի մասնակիցներից համապատասխանաբար որևէ մեկի կամ մի քանիսի թեկնածությանը: Ձայների հավասարության դեպքում անցկացվում է լրացուցիչ քվեարկություն՝ սույն կետում նշված

կարգով: Քվեարկության արդյունքներով առավելագույն «կողմ» ձայներ ստացած հարցազրույցի մասնակիցներից համապատասխանաբար մեկը կամ մի քանիսն ընդգրկվում են ցուցակում:

30. Յուրաքանչյուր հարցազրույցի մասնակցի գնահատման և (կամ) հանձնաժողովում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն:

31. Հանձնաժողովը ցուցակը կազմելուն հաջորդող մեկ օրվա ընթացքում պաշտոնական կայքերում հրապարակում է սույն կարգով նախատեսված ընթացակարգերի պահպանմամբ կազմված ցուցակը:

32. Մրցույթին մասնակցած յուրաքանչյուր անձ կարող է ծանոթանալ մրցույթի անցկացման ընթացքում ձեռք բերված կամ կազմված՝ իրեն վերաբերող փաստաթղթերին:

4. ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱԶՎԱԾՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ

33. Հանձնաժողովը ցուցակը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ ցուցակի հրապարակմանը հաջորդող մեկ օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան մրցույթը հայտարարելու օրվան հաջորդող 50-րդ օրը:

34. Ցուցակի հետ միասին Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ ներկայացվում են հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, մրցույթի ընթացքում ներկայացված և ձեռք բերված փաստաթղթերը:

35. Հայաստանի Հանրապետության Նախագահը ցուցակը ստանալուն օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում հաստատում է այն կամ մերժում:

36. Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից հաստատված թեկնածուների ցուցակը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով ներկայացվում է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովին:

5. ՆՈՐ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

37. Նոր մրցույթ հայտարարվում է, եթե՝

1) հավակնորդների թիվը չի գերազանցում երեքը.

2) հարցազրույցի մասնակիցների թիվը չի գերազանցում երեքը.

3) հարցազրույցին ներկայացած հարցազրույցի մասնակիցների թիվը չի գերազանցում երեքը.

4) չի ապահովվել սեռերի ներկայացվածության սկզբունքը, բացառությամբ սույն կարգի 28-րդ կետում նշված դեպքի.

5) Հայաստանի Հանրապետության Նախագահը մերժել է ցուցակի հաստատումը.

6) Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը չի ընտրել թեկնածուներից որևէ մեկին.

7) առկա են թեկնածուների ընտրությունն իրականացնելու անհնարինության այլ դեպքեր:

38. Հանձնաժողովը նոր մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է սույն կարգի 37-րդ կետում նշված որևէ հիմքի մասին պատշաճ տեղեկանալու օրվան հաջորդող 20 օրվա ընթացքում:

39. Նոր մրցույթն անցկացվում է ընդհանուր հիմունքներով:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ